


ԳԱՌՆԻ

ART-A
SAHA
1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Սահինյան

ԳԱՌՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 1985

ԳՄԴ 85-11
Հ 422

$U \frac{4902020000}{701\ (01)\ 85}$ պատվեր

© Հայկական ՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն, 1985

Գառնի ամրոցը հայ ժողովրդի բավմադարյան մշակույթի վարգացման նախաքրիստոնեական ժամանակաշրջանի խոշորագույն օջախներից է: Այն եղել է հայ թագավորների ամառային նստավայրը, որի եվակի կոթողների գիտական և գեղարվեստական նշանակությունը վաղուց դուրս է եկել ազգային մշակույթի շրջանակներից և նվաճել լայն ճանաչում:

Գառնիի կառույցների ճարտարապետական-շինարարական արվեստի բարձր մակարդակը պատահական չէ: Նախաքրիստոնեական շրջանի Հայաստանում գոյություն է ունեցել վարգացման նշանակալից աստիճանի հասած տեղական հարուստ ճարտարապետություն, որի ակունքները գալիս են շատ հեռավոր անցյալից:

Գրեթե երեքուկես հազարամյակ առաջ հայ ժողովրդի կազմավորման կենտրոններից մեկում՝ Հայաստանում (XV—XII դդ. մ. թ. ա.), արդեն գոյություն ունեին մի շարք նշանավոր քաղաքներ, ամրոցներ ու բնակավայրեր (Կումմախա, Թել, Բթառիճ և այլն):

Շինարարական-ստեղծագործական աշխատանքները հայկական լեռնաշխարհում մեծ չափերի հասան ուրարտական պետության գոյության ընթացքում (IX—VI դդ. մ.թ.ա.): Ստեղծվել էին բազմաթիվ քաղաքներ ու ամրոցներ (Տուշպա, Ռուսախինա, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Էրեբունի և այլն):

Ճարտարապետական-կառուցողական արվեստի այդ կարևորագույն օջախները դարձան հայ ժողովրդի ժառանգությունը:

Հայկական լեռնաշխարհում վարգացող ստրկատիրական հարաբերությունների հիման վրա IV—I դարերում (մ. թ. ա.) ստեղծվում է հայկական միասնական պետականություն: Երկրի տնտեսական ու քաղաքական աճին ուղեկցում է մշակույթի, այդ թվում՝ ճարտարապետության, վարգացումը:

Կառուցողական աշխատանքները տարվում են մի կողմից հին քաղաքներում ու ամրոցներում (Անի-Կամախ, Վան, Արմավիր), մյուս կողմից՝ երկրի տարբեր վայրերում հիմնադրվում են նոր մայրաքաղաքներ, թագավորանիստ կենտրոններ, մեծ ու փոքր բազմաթիվ այլ քաղաքներ (Արշամաշատ, Արկաթիոկերտ, Երվանդաշատ, Ջարիշատ, Ջարեհավան, Արտաշատ, Տիգրանակերտ, Մծուրն, Վաղարշապատ և այլն):

Առանձին քաղաքներ ժամանակին ունեցել են մեծ հռչակ: Այսպես, հույն հեղինակները Արտաշատի մասին գրում են, որ այն «մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք» է, անվանում են նրան «հայկական Կարթագեն»:

Հիշատակվում է, որ երկրի նորաստեղծ մայրաքաղաք Տիգրանակերտը կոչված էր «Առաջավոր Ասիայի հելլենիստական ամենամեծ քաղաքների՝ Սելևկիայի և Անտիոքի մրցակիցը լինելու»:

Երկրում ստեղծվել էին նաև բազմաթիվ անառիկ ամրոցներ (Արտագերս, Բաղաբերդ, Գառնի, Դարոյնք, Շատբերդ, Սինորա և այլն):

Ճարտարապետական-կառուցողական արվեստի վարգացմանը մեծապես նպաստում է նաև պաշտամունքային եվակի կառույցների և ճարտարապետական խոշոր խմբերի շինարարությունը:

Սակայն այդ շրջանի հուշարձաններից շատ քիչ բան է մեզ հասել: Ժամանակը և հաճախակի կրկնվող պատերազմները ավերել են ամեն ինչ, իսկ դրանց մնացորդները աստիճանաբար անցել են հողի հաստ շերտի տակ՝ սպասելով հետազոտողի բահին ու բրիչին:

Երջանիկ բացառություն է կազմում Գառնի ամրոցը, որի գիտական հետազոտության հիմքը դրեցին ակադեմիկոս Ն. Մառը և ռուս նշանավոր գիտնական Յա. Սմիռնովը, երբ 1909—1911 թթ. բացվեցին ամրոցի ներսում գտնվող հեթանոսական տաճարի մնացորդները:

1949-ից Հայկական ՍՍՀ գիտու-

թյունների ակադեմիայի հնագիտական արշավախումբը պրոֆ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ ամրոցի սիստեմատիկ ուսումնասիրությանը: Պեղումների շնորհիվ բացվեցին ամրոցի պաշտպանական սիստեմը, պալատական կառույցների ու բաղնիքի մնացորդները, և հայտնաբերվեց հնագիտական հարուստ նյութ:

Գառնի ամրոցի կառուցման ստույգ ժամանակն անհայտ է: Մատենագրությունը դրա սկզբնավորումը կապում է հայ ժողովրդի ամենահեռավոր անցյալի հետ:

Գրական, վիմագրական ու հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գառնին, իբրև անառիկ ամրոց, գոյություն է ունեցել դեռևս Արտաշեսյան թագավորության վաղ շրջանում կամ, նույնիսկ, Երվանդյանների ժամանակներում (III—II դդ. մ. թ. ա.):

II—I դարերում (մ. թ. ա.) Հայաստանը գտնվում էր ժամանակի առաջավոր մշակույթ ունեցող երկրների շարքում: Արևելքի շատ երկրների նման, Հայաստանում նույնպես հելլենիստական մշակույթը, հատկապես I դարում (մ. թ. ա.), հասնում է վարգացման բարձր մակարդակի: Հայաստանը որոշակի շփման մեջ էր գտնվում հելլենիստական հարևան երկրների հետ: Հայ թագավորներ Տիգրան II-ը և Արտավազդ II-ը հովանավորում էին հելլենիստական մշակույթի վարգացմանը: Տիգրան II-ի արքունիքում ապաստան են գտել Աթենքից արտաքսված հույն նշանավոր հռետորներ Ամֆիկրատեսը և Մետրոդոր Սկեպսացին, որը գրել է Տիգրան II-ի թագավորության պատմությունը:

Արտավազդ II-ը (55—34) հունարեն լեզվով գրում էր ողբերգություններ, պատմվածքներ ու պատմական աշխատություններ: Տիգրանակերտում և Արտաշատում գործում էին հելլենիստական տիպի թատրոններ:

Չնայած հունական մշակույթի առանձին տարրեր ներթափանցել էին հայկական մշակույթի մեջ, այնուհանդերձ, հայկական մշակույթը ընթացավ վարգացման ուրույն ճանապարհով: Ժողովուրդը շարունակեց վարգացնել նախնիներից ժառանգած տեղական ավանդույթները:

Հելլենիստական մշակույթը Հայաստանում ստրկատիրական վերնախավի և քաղաքային բնակչության մշակույթ էր, որի օջախներից մեկը Գառնի ամրոցն էր:

Գառնի ամրոցը գտնվում է Երևանից 28 կիլոմետր հեռավորության վրա, Աբովյանի շրջանի Գառնի գյուղի հարավարևմտյան ծայրամասում:

Ըստ ուրարտական թագավոր Արգիշտի I-ի (VIII դ. մ. թ. ա.) Գառնիում գտնված սեպագիր արձանագրության, դեռևս ուրարտական շրջանում, երկիրը կոչվել է Գառնի (Գիառնիանի):

Գառնիի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունը տալիս է հռոմեական պատմագիր Կոռնիլիոս Տակիտոսը (I—II դդ. մ. թ.): Վրաց Փարասման թագավորի եղբայր Միհրդատը, որը Հայաստանի թագավոր էր կարգված, դարձավ իր եղբոր որդու՝ Ռադամիզդի գահակալական դավադրության զոհը: «Հանկարծակի ներխուժումից ահաբեկված... Միհրդատին Ռադամիզդը քշեց Գորնեաս (Գառնի), որն ապահով էր թե՛ տեղադրության, թե՛ հռոմեական կայազորի պաշտպանության հետևանքով» (Տակիտոս):

Պատմագիրը հայտնում է, որ դավադիրները, որոնց անհայտ էին «մեքենաները և ամրոցի պաշարման արվեստը», միայն դավաճանության ու կաշառքի միջոցով կարողացան գրավել ամրոցը:

51 թվականին տեղի ունեցած այս դեպքերը ցույց են տալիս, որ Գառնին դեռևս այդ ժամանակ անմատույց բերդ էր:

Ամրոցի կառուցողական հետագա

աշխատանքների լուսաբանմանը մեծապես նպաստում է Գառնիում հայտնաբերված հունարեն շինարարական արձանագրությունը, ըստ որի՝ Մեծ Հայքի Տրդատ թագավորը իր գահակալության տարիներին շինեց (վերականգնեց) ամրոցը: Դա Տրդատ I-ի թագավորության 11-րդ տարին էր՝ այսինքն՝ 76 թվականը[1]:

Հայտնի է, որ հռոմեական վորքերը 59 թվականին ավերում են Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը: Մի քանի տարի անց (65—66 թթ.) հռոմեական կայսր Ներոնը, ճանաչելով Հայաստանի վրա Տրդատ թագավորի իշխանությունը, Արտաշատի վերականգնման համար նրան տալիս է 50 միլիդինարդրախմա (մոտ 20 միլիոն ռուբլի ոսկու արժողությամբ):

Ենթադրվում է, որ Արտաշատի վերականգնմանը զուգընթաց, Տրդատ I-ը վերակառուցել է նաև նախորդ պատերազմներից վնասված Գառնի ամրոցը:

Գառնի ամրոցի շինարարական աշխատանքների վերաբերյալ մյուս տեղեկությունը տալիս է V դարի պատմիչ Մովսես Խորենացին, սակայն նա Տրդատ I-ի կառուցողական աշխատանքները վերագրել է Տրդատ III-ին:

V դարի հայ մյուս մատենագիրները Գառնին հիշատակում են իբրև խիստ ամրացված արքունի ամրոց (Փավստոս Բուզանդ) կամ իբրև քաղաք՝ իր անմատույց ամրոցով, ուր «կայանք զօրացն էին» (Եղիշե):

Աղբյուրներում հիշատակվում է, որ Գառնին զորակայան էր նաև պարսիկների տիրապետության ժամանակ:

X—XIII դարերի պատմիչները Գառնին հաճախ անվանել են գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ: Հետագայում, իբրև անմատչելի ամրոց, նա աստիճանաբար կորցրել է իր նշանակությունը, չնայած շինարարական կյանքըն այնտեղ շարունակվել է մինչև միջնադար (XV—XVI դդ.):

Գառնի ամրոցը, ստեղծվելով ոչ ուշ քան II դարում (մ. թ. ա.), իբրև պաշտպանական անառիկ սիստեմ գոյություն է ունեցել ավելի քան մեկուկես հազարամյակ:

Գառնի ամրոցը ներկայումս կիսավեր վիճակում է, սակայն պահպանված մասը լիովին հնարավորություն է ընձեռում վերարտադրել նրա պաշտպանական-կառուցողական ամբողջ համակարգը:

Ամրոցը կառուցված է եռանկյունաձև դարավանդի վրա, որը հարավային, հարավարևմտյան և կիսով չափ արեվելյան կողմերից շրջապատված է խոր ձորերով և եզերված է անանցանելի ժայռերով, իսկ մնացած մասերում պարըսպապատերի հաջորդականությամբ ստեղծված է ռավմաշինության (ֆորտիֆիկացիոն) մի հզոր սիստեմ: Ամրոցի արևելյան հատվածում, որտեղ հակառակորդը տեղանքի պատճառով դժվարությամբ կարող էր մոտենալ պարսպապատերին, հետևապես նրա հարձակումը հնարավոր կլիներ ետ մղել ավելի պակաս ուժով, աշտարակները կառուցված են իրարից 25—32 մետր հեռավորության վրա, իսկ այն մասում, որտեղ թշնամին կարող էր համեմատաբար անարգել մոտենալ պարիսպներին, հետևապես պետք է որ ավելի մեծ ուժեր կենտրոնացվեին նրա դեմ, կառուցված են մեծ թվով աշտարակներ, որոնք գտնվում են միմյանցից 10—13,5 մետր հեռավորության վրա:

Աշտարակներն ուղղանկյունաձև են: Նման աշտարակներ գոյություն են ունեցել հելլենիստական նաև այլ երկրներում՝ Փոքր Ասիա (Միլետ, Պերգամ), Սիրիա (Բաալբեկ, Ջեռաշա) և այլուր:

Հայկական լեռնաշխարհում ուղղանկյունաձև աշտարակները գոյություն են ունեցել դեռևս ուրարտական ժամանակաշրջանից (Արգիշտիխինիլի):

Պեղումների նյութերը հիմք են տա-

[1] Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտական արշավախմբի պեղումների ժամանակ հայտնաբերվել է նաև արամերեն արձանագրություն:

լիս ենթադրելու, որ պարսպապատերը և աշտարակները ունեցել են ատամնաձև վերջավորություններ: Ինչպես պարսպապատերը, այնպես էլ աշտարակները կառուցված են տեղական կապտավուն որձաքարի խոշոր վեմերով, առանց շաղախի: Քարերը սրբատաշ են և ունեն ժապավենաձև երիզներ, որոնց կողերը կտրված են 45 աստիճանի անկյան տակ:

Որմնաքարերը միացված են երկաթե կապերով, որոնց քարերի հետ միացման հանգույցները լցված են կապարով: Վերևի և ներքևի շարքերի միջև մետաղե կապեր չկան: Անշուշտ այդ է պատճառը, որ որոշ տեղերում երկրաշարժի ցնցումների հետևանքով որմնաքարերը հորիզոնական ուղղությամբ սահել են դեպի առաջ և կոնսոլաձև կախվել միմյանց վրա:

Իբրև երկարության միավոր օգտագործված է ուրարտական ճարտարապետության մեջ լայն կիրառում գտած Հին Միջագետքի Նիպուրական կանգունը (51,8 սանտիմետր):

Պարսպապատերն ունեն 2,07—2,12 մետր հաստություն և ամբողջ պարագծով (աշտարակների հետ մեկտեղ)՝ 314,28 մետր երկարություն: Առանձին տեղերում պահպանվել են 6—7 մետր բարձրությամբ 12—14 շարքեր:

Աշտարակներն ունեն երկու ձևի շարվածք: Մուտքի մոտի առաջին և երկրորդ աշտարակների և արևմտյան կողմի երկրորդ աշտարակի պատերը շարված են առանց շաղախի: Այստեղ, աշտարակների եզրագծերում և աշտարակների ու պատերի միացման հանգույցներում որմնաքարերը միացված են երկաթե կապերով, իսկ ներսի որմնաքարերը՝ առանց մետաղե կապերի, ուղղակի կպած են իրար և դրանց միջև ուղղաձիգ մակերեսների անհարթությունների հետևանքով առաջացած ապատ տարածությունը լցված է կրաշաղախով: Շաղախը կատարում է ոչ թե միացնող, այլ լրացնող դեր:

Մնացած բոլոր աշտարակներում արտաքին պարագծով կառուցված են 1,15—1,50 մետր հաստության պատեր, որոնց քարերը դրսից միացված են երկաթե գամերով, իսկ ներսից առանց որևէ կապի հպված են իրար: Քարե այդ շրջանակի կառուցումից հետո աշտարակի միջի դատարկ տարածությունը լցրել են կրաշաղախով: Շաղախը լցված է շերտ-շերտ, յուրաքանչյուր շարքը կառուցելուց հետո:

Պարսպապատերը և աշտարակները ավելի շատ ավերված են արևմտյան ու հյուսիսարևմտյան հատվածներում և, իբրև կանոն՝ դրսի կողմից: Որմնաքարերի միացման անկյունները ջարդել են, որպեսզի երկաթե գամերի ծայրերի կապարը հանեն հրապենի գնդակներ և կոտորակ պատրաստելու համար:

Ամրոցի ընդհանուր կառուցվածքում նկատվում են շինարարական մի քանի շրջաններ:

Առաջին շրջանին է պատկանում պարսպապատերի և ուղղանկյուն աշտարակների առավել հնագույն կառուցվածքը, որի թե՛ շարը, թե՛ տաշը կատարված է մեծ խնամքով:

Երկրորդ շրջանը ներկայացված է նույն չափերի քարերով կառուցված որմնաշարքերով, որոնց արտաքին երեսների մշակման որակը վիջում է հնագույն մասի քարերի մշակմանը: Այդ հատվածներն, ըստ երևույթին, վերաբերում են 76 թ. վերակառուցմանը: Գառնի ամրոցում կիրառված առաջին և երկրորդ շրջանի կառուցողական տեխնիկային հանդիպում ենք նաև Հայաստանի մյուս վայրերում (Արմավիր, Երվանդաշատ, Երվանդակերտ, Անիի հնագույն կառուցվածքներում և այլուր):

Երրորդ շրջանին է վերաբերում մուտքի արևելյան կողմից կցված կլոր աշտարակը: Այստեղ, ի տարբերություն շինարարական նախորդ շրջանների, պատերը կառուցված են առանց մետաղե կապերի, որմնաքարերի միացման համար օգտագործ-

ված է կրաշաղախը, սակայն պատի հիմնական կրող մասը քարն է:

Չորրորդ շրջանին է պատկանում որձաքարի մանրասալերով կատարված վերակառուցումը, որն իրագործված է Միջնադարյան Հայաստանում մեծ տարածում գտած շինարարական տեխնիկայով, երբ քարը, ըստ էության, կատարում էր երեսապատման դեր, իսկ պատի հիմնական, կրող վանգվածը կրաշաղախային միջուկն էր:

Հինգերորդ շրջանին է վերաբերում ամրոցի գլխավոր մուտքի պատերի ներսի երեսին պահպանված տուֆաշեն կառուցվածքի մնացորդը, որը կատարված է նախորդ շրջանի կառուցողական տեխնիկայով, բայց ավելի ուշ և այլ շինանյութով: Այս վերակառուցումը, հավանաբար, տեղի է ունեցել Զաքարյանների ժամանակ (XIII դ.), երբ վերջիններս ընդարձակ արձանագրություն են թողել հեթանոսական տաճարի մուտքի պարակալի վրա:

Ամրոցի պարիսպներից ներս պահպանվել են աշխարհիկ և պաշտամունքային կառույցների ճարտարապետական-գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող մնացորդներ (հեթանոսական տաճարի ավերակներ, բաղնիքի և պալատական շենքերի մնացորդներ և այլն):

Այդ շենքերը, համախմբված լինելով ամրոցի եռանկյունաձև տեղանքի հարավային հատվածում, միմյանց նկատմամբ ունեցած դասավորությամբ և ընդհանուր մտահղացումով կազմել են ճարտարապետական մի յուրահատուկ անսամբլ: Անսամբլի կոմպոզիցիոն կենտրոնը կազմել է տաճարի սյունապարդ հորինվածքը, որը գլխավոր ճակատով ուղղված լինելով դեպի ամրոցի կենտրոնական մուտքը, առինքնում է ամրոց մտած այցելուին առաջին իսկ հայացքից:

Տաճարից մոտ քսան մետր դեպի արևմուտք, հրվանդանի ուղղաձիգ ժայռերի գրեթե շուրթին, բարձրացել են պալատական շենքերը: Դրանք իրենց գլխավոր ճակատներով մասնակցել են տաճարի առջև փռված հրապարակի ճարտարապետական-տարածական միջավայրի կազմակերպմանը, մյուսներով՝ բացվել դեպի շրջապատի լեռնային բնության հակադրություններով լի գեղատեսիլ բնանկարը, ավելի ճիշտ, միահյուսվել նրան: Ճարտարապետությունը դարձել է բնության օրգանական մասը, լրացրել, հարստացրել այն:

Պալատական համալիրը բաղկացած է եղել մի քանի շենքերից: Պեղումների շնորհիվ առայժմ բացվել են ավելի քան 40 մետր երկարությամբ և մոտ 15 մետր լայնությամբ արքունի ապարանքի մնացորդները: Բացված հատվածի հարավարևելյան կեսում գտնվել է 1 : 2 համաչափությամբ կամարակապ մի խոշոր դահլիճ, իսկ մյուս կեսում գտնվել են տարբեր չափերի ու նշանակության բազմաթիվ սենյակներ:

Հետաքրքրական է դահլիճի կառուցվածքը, որի 9,65×19,92 մետր չափի հատակագծային ներքին տարածությունը ութ վանգվածային մույթերի միջոցով երկայնական ուղղությամբ բաժանված է եղել երկու հավասար մասերի՝ նավերի[1]:

Մույթերին համապատասխան, դահլիճի արևելյան և արևմտյան պատերին կից, ստեղծվել են նույն քանակի և գրեթե նույն չափերի որմնամույթեր, որոնցից սկզբնավորված երբեմնի կամարները հիմք են ծառայել շենքի թաղակապ ծածկի համար[2]:

---

[1] Կառուցվածքի ներքին տարածության այդպիսի բաժանման օրինակ կա նաև ուրարտական ճարտարապետության մեջ (Թեյշեբաինի):

[2] Գրեթե նույն չափի ու հատակագծային համանման հորինվածքի աշխարհիկ նշանակության կառուցվածք է Բագինեթիի անտիկ շրջանի դահլիճը (Վրաստան), միայն Գառնիի վանգվածային մույթերի փոխարեն այնտեղ սյունաշար է, թաղի փոխարեն՝ փայտաշեն ծածկ: Գառնիի երկնավաձև դահլիճի հորինվածքը կարող է որոշակի դեր կատարած լինել վաղ միջնադարի հայկական նույնանը-

Ներկայումս պահպանված է արեվելյան պատը՝ 2,5—3 մետր բարձրությամբ, ինչպես և հյուսիսային պատը, իսկ մյուսները՝ չնչին բացառությամբ, հիմնովին ոչնչացված են: Դահլիճի հատակը հեթանոսական տաճարի հատակից ցածր է, ըստ երևույթին այն եղել է երկհարկանի:

Շենքի մնացորդների մի մասը գըտնըվում է VII դարում կառուցված քըրիստոնեական պաշտամունքի քառաբսիդ տաճարի հիմքերի տակ: Նըշանակում է VII դարում պալատական խումբը մասամբ կամ ամբողջապես գտնվում էր արդեն ավերված վիճակում:

Պալատական խմբերի մյուս կեսի՝ դեպի հրապարակ ուղղված պատն ունի միմյանց հաջորդող մի քանի ուղղանկյուն ելուններով մշակված եզրագիծ. անկասկած, դրա վրա բարձրացված ճակատն ունեցել է հանդիսավոր տեսք: Հյուսիսարևմտյան սենյակներից մեկի ներսի ծեփի վրա պահպանվել են մուգ վարդագույն ներկի հետքեր: Եթե նկուղային հարկում գոյություն է ունեցել որմնանըկարչություն, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ հարուստ ու արտահայտիչ տեսք պետք է ունեցած լինեին վերնահարկի պալատական մյուս սենյակներն ու արքունական ընդունելության դահլիճները:

Պատերը կա՛ռուցված են ճեղքված որձաքարից և գետաքարից, իբրև միացնող նյութ օգտագործված է կրաշաղախը: Քարի որմնաշարքերին կուգընթաց տեղ-տեղ հանդիպում են նաև աղյուսի շարքեր:

Հեթանոսական տաճար: Հայաստանում գոյություն է ունեցել պաշտամունքի ինչպես առանձին կառուցվածքների. այնպես էլ ճարտարապետական խոշոր խմբերի ընդարձակ ցանց: III դարի վերջերին կամ IV դարի սկզբներին, երբ երկրում քրիստոնեությունը հռչակվել էր պետական կրոն, հեթանոսական մշակույթի մյուս հուշարձանների հետ կործանվել են նաև գրեթե այդ բոլոր կառուցվածքները: Միայն առանձին տեղերում որոշ մեհյաններ հարմարեցվել են նոր կրոնի պահանջներին և վերածվել քրիստոնեական պաշտամունքի տաճարների: Բացառություն է կազմել, ըստ երևույթին, Գառնի ամրոցի արքունական տաճարը:

Մատենագրական տեղեկությունների հիման վրա մեհյանական այդ կառուցվածքներից հայտնի են Արմավիրի՝ Արեգակի և Լուսնի պաշտամունքին նվիրված տաճարը, Անի-Կամախի՝ Արամազդի պաշտամունքի տաճարը, Եկեղյաց գավառի Երիպա ավանի Անահիտի պաշտամունքի տաճարը, Աշտիշատի՝ Անահիտի, Աստղիկի և Վահագնի պաշտամունքների տաճարների խումբը, Արտաշատի և Անձևացյաց երկրի Դարբնաց քարի Անահիտի պաշտամունքի տաճարները, Դերջան գավառի Բագայառիճ գյուղի Միհրի պաշտամունքի տաճարը, Եկեղյաց գավառի Թիլ ավանի՝ Նունեի պաշտամունքի տաճարը, Դարանաղյաց գավառի Թորդան գյուղի Բարշամինի պաշտամունքի տաճարը, Երազմոյն ավանի՝ Տիրի պաշտամունքի տաճարը, Բագարանի կամ Դիցավանի տաճարը, Տարոնի Քարքե լեռան տաճարները, Բագրևանդի տաճարների խումբը և այլն:

Անի-Կամախի տաճարն իր մեհյանական գրականության և արխիվի շնորհիվ նշանակալից դեր է կատարել ժամանակի մշակութային կյանքում: Այստեղ է աշխատել սիրիական հայտնի գրող և գիտնական Բարդածան Եդեսացին (154—222):

Եկեղյաց գավառի Երիպա ավանում կառուցված Անահիտի տաճարի համբավն այնքան մեծ էր, որ այնտեղ երկրպագության էին գնում ոչ միայն հայ, այլև հույն թագավորները: Տաճարում դրվող Անահիտի արձանը ավանդաբար պատրաստվում էր ոսկուց:

Այդ կառուցվածքների մեծ մասը

ման բնույթի կառուցվածքների կազմավորման գործում (Դվին, Արուճ և այլն):

գոյություն է ունեցել մինչև Հայաստանում քրիստոնեական կրոնի հաստատումը: Բնական է, պաշտամունքի բազմադարյան կյանք ունեցող այդ կառուցվածքները պետք է որ հանդիսանային իրենց նշանակությանը և ունեցած հոչակին համապատասխանող ճարտարապետական-կառուցողական բարձր արվեստի գործեր: Այդ մասին է վկայում նաև Գառնիի տաճարի ճարտարապետությունը:

Տաճարի կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ. սակայն շինության ճարտարապետական - կառուցողական արվեստի, մատենագրական վկայությունների և վիմական նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ կառուցվել է I դարի երկրորդ կեսին (66-ից հետո):

Քրիստոնեական կրոնի ընդունումից հետո տաճարի շենքը ծառայել է աշխարհիկ նպատակների. ըստ Մովսես Խորենացու, այն եղել է Տրդատ III թագավորի (287—330) քրոջ՝ Խոսրովադուխտի «հովանոցը»:

Տաճարը կանգուն վիճակում մնացել է մինչև XVII դարը և խորտակվել 1679 թ. երկրաշարժի ժամանակ: Այնուհետև նրա ավերակներն իրենց վրա են բևեռում հայրենի և օտար բազմաթիվ մասնագետների ուշադրությունը (Շարդեն, Մորիեր, Կեր-Պորտեր, Դյուբուա, Տելֆեր, Շանտր, Շընաապե, Մառ, Սմիռնով, Թորամանյան, Ռոմանով, Բունիաթյան, Տրևեր, Մանանդյան և շատ ուրիշներ):

Սակայն հուշարձանի գիտական առավել հանգամանալից ուսումնասիրությունը սկսվեց 1909—1911 թվականներին՝ տաճարի շրջապատում ակադեմիկոս Ն. Մառի ձեռնարկած պեղումների ժամանակ: Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերիեի 1834 թ. կազմած անդրանիկ նախագծին հաջորդեցին Ն. Մառի արշավախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովի՝ 1912 թ., և պրոֆ. Ն. Բունիաթյանի՝ 1933 թ., կազմած վերակազմության նախագծերը:

Վերջին տարիների ուսումնասիրությունների շնորհիվ ձեռք բերված նոր նյութերի հիման վրա, 1968 թ. Ալ. Սահինյանը կազմեց նոր նախագիծ, որով հեղինակի ղեկավարությամբ իրականացվեց տաճարի բնական վերականգնումը (1969—1975 թթ.):

Ն. Մառի կատարած պեղումների ժամանակ, տաճարի սկզբնական կառուցվածքից պահպանվել էին հարթակը (պոդյումը), սյունաշարքի մի քանի խարիսխները և դահլիճի հյուսիսարևմտյան պատի մի փոքր հատվածը:

1930-ական թվականներին պրոֆ. Ն. Բունիաթյանի ղեկավարությամբ կատարվեց տաճարի սկզբնական կառուցվածքի մասնակի վերակառուցումը, որի ժամանակ շարվեցին դահլիճի պատերի մի քանի շարքը, աստիճանների մի մասը և մուտքի ներքևի հատվածը: Վերականգնման ժամանակ ավելացված մասերը նորից հեռացվեցին, և շինարարական աշխատանքները սկսվեցին շենքի այն մակարդակից, որ գոյություն ուներ Ն. Մառի պեղումների ժամանակ: Շինարարությունը կատարվեց տաճարի սկզբնական կառուցվածքում կիրառված տեխնիկայով: Պակասող քարերի փոխարեն տեղադրվեցին բարձր որակով մշակված համանման քարեր (Գառնիի որձաքար), այնպես, որպեսզի նկատելի լինի հնի և նորի տարբերությունը (քանդակապարդ բեկորների լրացումը կատարվեց առանց քանդակների, նոր քարերի վրա միաժամանակ փորագրվեց վերականգնման ժամանակը՝ XX դարը հիշատակող հատուկ նշան): Կոտրված բեկորները միացվում էին հատուկ սոսնձով (էպօքսիդային խեժ), բայց քանի որ սոսնձի երկարակեցությունը դեռևս անհայտ է, քարերի առանձին մասերը իրար հետ կապվեցին նաև երկաթե գամերով:

Այսպիսով, տաճարը լիովին վերականգնվեց: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի այս եզակի կոթողն իր կառուցումից ճիշտ 1900 տարի հե-

տո, վեր խոյանալով 300-ամյա ավերակների կույտից, նորից ստացավ իր սկզբնական հրաշակերտ տեսքը:

Տաճարի սյունապարդ կառուցվածքը, որ կանգնեցված է ամրոցի հարավարևելյան հատվածի բարձունքի վրա, վեհորեն ներդաշնակում է շրջապատի հիասքանչ բնանկարին: Հրվանդանից ցած՝ ավելի քան 300 մետր խորության վրա, Ազատ գետն է մեղմ աղմկում, շուրջը երկինք են ձգվում Գեղամա լեռները:

Հուշարձանն իր ճարտարապետական մտահղացմամբ և դիրքով ընկալվում է ամենահեռավոր և ամենամոտ կետերից և յուրաքանչյուր անգամ ստեղծում գեղարվեստական ներգործության նոր պատկեր: Հեռվից նրա ուրվագիծը, միացած ամրոցի ճարտարապետական խմբի ընդհանուր ուրվանկարին, իր ձևերով ու շինանյութի գույնով ներդաշնակորեն միահյուսվում է շրջապատի բնության բազմերանգ բնապատկերին, հետզհետե մոտենալով նրան, աստիճանաբար այն անջատվում է միջավայրից և իր տարածական-ծավալային հորինվածքի հուզական ամբողջ ուժով վեր խոյանում դիտողի առջև:

Տաճարն, ըստ ընդհանուր կոմպոզիցիայի, բարձր հարթակի (պոդյումի) վրա դրված պերիպտեր է, որի հատակագիծը ներկայացնում է 5,02×
×7,98 մետր չափի ուղղանկյուն դահլիճ («ցելլա», «նաոս») նախամուտքով («պրոնաոս»), որը արտաքինից շրջապատված է կարճ ճակատներում վեցական, երկար ճակատներում՝ ութական, այսպես կոչված, հռոմեական-հոնիական օրդերի սյուներով:


Շենքը գլխավոր ճակատով ուղղված է դեպի հյուսիս, ուր և գտնվում է մուտքը: Գլխավոր ճակատի ամբողջ լայնությամբ ձգվում են 0,30 մետր բարձրության ինը վանգվածային աստիճաններ, որոնք կառուցվածքին տալիս են հանդիսավորություն և վեհություն: Աստիճանները երկու կողմից ներփակված են բարձրաքանդակներով վարդարված հատուկ պատվանդաններով: Դրանց վրա պատկերված են մեկ ոտքի վրա ծնկի եկած և ինչ-որ ծանրություն կրելու նպատակով ձեռքերը դեպի վեր պարված մեկական մերկ ատլանտներ: Ենթադրվում է, որ պատվանդանների վրա դրված են եղել վոհարաններ:

Տաճարի պատերը կառուցված են որձաքարից, որը մշակված է մեծ կատարելությամբ, մի բան, որը կարող էին անել այդ շինանյութի վրա աշխատելու դարավոր փորձ ունեցող տեղական վարպետները: Որձաքարի մշակման տեխնիկան հայկական լեռնաշխարհին հայտնի է դեռևս ուրարտական ժամանակաշրջանից: Որմնաքարերը, ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական ուղղությամբ միացված են երկաթե կապերով և դրանց միացման փոսիկները լցված են կապարով: Սյուների քարերի միացումներում օգտագործված են նաև բրոնզե ուղղաձիգ կապեր:


Հետաքրքրական է տաճարի ներքին կառուցվածքը: Տաճարի ուսումնասիրությամբ զբաղված բոլոր մասնագետները (Ն. Մառ, Կ. Ռոմանով, Ն. Բունիաթյան, Կ. Տրևեր և ուրիշներ) կարծում էին, որ դահլիճի և ընդհանրապես ամբողջ շենքի ծածկը եղել է փայտակերտ:

Հուշարձանի ավերակների շրջապատում թափված բեկորների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Գառնիի տաճարի կառուցվածքում փայտե ոչ մի մաս չի եղել: Շենքն ունի քարե կոնստրուկցիաների մի հստակ համակարգ, ուր, բացի արխիտրավի քարերից, մնացած բոլոր մանրամասները՝ ֆրիզ, քիվ, դռան սանդրիկ, դրա վրայից ընթացող շարքի քարերը, նույնիսկ սյունասրահի և նախամուտքի առաստաղի սալերը, ունեն սեպաձև միացումներ, իսկ դահլիճը՝ կիսաշրջանաձև քարաշեն թաղակապ ծածկ:


Թաղը վերևից ծածկվել է կրաշա-



Հեթանոսական տաճարի գլխավոր ճակատը մինչև վերականգնումը:



Տաճարի հարավային ճակատը մինչև վերականգնումը:



Տաճարի արևմտյան ճակատը մինչև վերականգնումը:

ղախով և վերջինիս վրա ամրացվել որձաքարից պատրաստված կղմինդր (սալիկներ), ճիշտ այն ձևով, ինչպիսին հանդիպում ենք Հայաստանի վաղ միջնադարի թաղակապ կառուցվածքների տանիքներում: Կրաշաղախի բեռի կշիռը նվազեցնելու նպատակով, օգտագործված է հրաբխային, ծակոտկեն շատ թեթև քար:

Այդպիսի կառուցվածք ունեն նաև Զվարթնոցի VII դարի տաճարի առավել պատասխանատու կոնստրուկտիվ հանգույցները:

Հին Արևելքի նյութական մշակույթի խոշոր գիտակ, պրոֆ. Հ. Ստրժիգովսկին անդրադառնալով հայ ճարտարապետական արվեստում կոնստրուկցիաների ունեցած դերին, գրում է. «Կոնստրուկցիան՝ հայ եկեղեցական ճարտարապետության թաղածածկ տարածական կառուցվածքների հիմնական բնորոշ հատկանիշն է: Միջերկրական ծովի ավազանի երկրների փայտակերտ տանիքով եկեղեցիների համեմատությամբ այս տարբերությունը՝ Հայաստանի քրիստոնեական հին ճարտարապետության պատմական վարգացման համար վճռական գործոն հանդիսացավ»: Իրավամբ մեծ նշանակություն տալով հայկական ճարտարապետության մեջ թաղային կոնստրուկցիաների ունեցած դերին, Ստրժիգովսկին այն կարծիքն է հայտնում, որ դրանք Հայաստան են ներմուծվել V դարում՝ Միջագետքից և Փոքր Ասիայից:

Գառնիի տաճարը ապացուցում է, որ հայ պատմական ճարտարապետության վարգացման համար «վճռական գործոն» էր թաղը: Թաղային կոնստրուկցիան Հայաստանում գոյություն է ունեցել Ստրժիգովսկու նշած ժամանակաշրջանից առնվազն չորս դար առաջ:

Ուշագրավ է Գառնիի տաճարի աղոթասրահի հատակագծային հորինվածքը:

Տարիներ առաջ, ցույց տալով Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի վաղ միջնադարի և ուրարտական ժամանակաշրջանի տաճարների միջև գոյություն ունեցող գենետիկ կապը, Գառնիի և Թոփրախ-կալեի տաճարների (VIII դ. մ. թ. ա.) հատակագծային հորինվածքի մասին նշել ենք, որ «Թոփրախ-կալեի հատակագծի հարթակն ունի «ոսկյա հատման» համաչափություն և մոտենում է Գառնիի հեթանոսական տաճարի հատակագծի համաչափություններին»:


Նույն հարաբերությունը կա նաև ավելի ուշ՝ Էրեբունիի պեղումների ժամանակ բացված Սուսի ուրարտական տաճարի հատակագծի (VIII դ. մ. թ. ա) և Գառնիի միջև:

Ընդ որում Սուսիի և Գառնիի աղոթասրահների հատակագծերը նման են ոչ միայն համաչափություններով, այլև բացարձակ չափերով: Բնական է, Գառնիի աղոթասրահի համար կարող էին օրինակ ծառայել ոչ միայն Թոփրախ-կալեն կամ տարածքային տեսակետից ավելի մոտ գտնվող Սուսին, այլ տվյալ միջավայրում գոյություն ունեցող նույն ժամանակների կամ ավելի ուշ շրջանի համանման ուրիշ կառուցվածքներ:

1969 թ. Գառնիի տաճարի հիմքերի ամրացման ժամանակ հայտնաբերվեցին հնագույն սրբավայրի գոյությունը հաստատող իրական ապացույցներ՝ տաճարի հարավային պատի տակ հնագույն շենքի պատի մնացորդներ, իսկ արևելյան պատի հիմքերից ցած՝ սրբական կրակի մոխիրը պահելու հորեր՝ ածխի, մոխրի, վոհաբերված կենդանիների ոսկրերի և հնագույն խեցեղենի մնացորդներով լեցուն:

Հին շենքի պատը շարված է լարով, շինանյութը՝ ճեղքված որձաքարն է, իբրև կապակցող նյութ օգտագործված է հողը (կավը):

Շարվածքի ձևը և շրջապատում գըտնըված խեցեղենը հնարավորություն են տալիս հին շենքը համարել առնըվազն վաղ հայկական (եթե ոչ առավել հին) շրջանի կառուցվածք:



Տաճարի հատակագիծը վերականգնումից հետո:

V դարի մատենագիրներ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու վկայություններից հայտնի է, որ մյուս ժողովուրդների հեթանոսական տաճարների նման հայկական մեհյանները նույնպես ունեցել են պաշտվող կուռքի արձաններ:

Այսպես, Խորենացին հայտնում է, որ Վաղարշակը «... Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին»: Կամ՝ անդրադառնալով Արտաշես թագավորի (180—160) գործունեությանը, գրում է.

«Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլեսի և Ապոլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում:

... Հելլադայում էլ վերցնելով Դիոսի, Արտեմիդի, Աթենասի, Հեփեստոսի և Աֆրոդիտեի արձանները՝ ուղարկվում է Հայաստան»: Խոսելով Տիգրանի՝ Արտաշես Ա-ի որդու մասին, պատմիչը հիշատակում է. «Իբրև առաջին գործ նա կամեցավ մեհյաններ շինել: ... Ոլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Անիում, Աթենասինը՝ Թիլում, Արտեմիդեի մյուս արձանը՝ Երիզայում և Հեփեստոսինը՝ Բագայաուիճում: Բայց Աֆրոդիտեի արձանը ... հրամայում է կանգնեցնել ... Հերակլեսի արձանի մոտ Հաշտից տեղում»:

Պաշտվող կուռքի արձան կանգնեցված է եղել նաև Գառնիի տաճարում: Այն դրված է եղել աղոթասրահի ետևի պատի մոտ՝ բարձր պատվանդանի վրա, ներառնված բավականին մեծ չափեր ունեցող ուղղանկյուն խորշի մեջ:

Հեթանոսական փոքր տաճարների ներսը սովորաբար լուսավորվում է անհամեմատ մեծ չափեր ունեցող մուտքի բացվածքով: Գառնիում մուտքի բացվածքն այնքան մեծ է, որ այնտեղից ներթափանցող լույսը լիովին բավական էր աղոթասրահը անհրաժեշտ չափով լուսավորելու համար: Չնայած դրան, Գառնիի աղոթասրահը լուսավորվել է նաև վերևից՝ երդիկից:

Այս առումով ուշագրավ են հանրաճանաչ գիտնական Օգյուստ Շուապի դիտումները: Նա գրում է. «Անհրաժեշտ է նշել, որ այն տաճարները, որոնցում առավել ստույգ են հաստատված վերևից լուսավորելու բացվածքների առկայությունը, նվիրված են լույս անձնավորող աստվածություններին՝ Զևսին (Օլիմպիա, Սելինունտ), Ապոլոնին (Ֆիգալա, Միլետ)»:

Իրավամբ ենթադրվում է, որ Գառնիի տաճարը նվիրված է եղել հին հայկական արևի աստված Միհրին:

Ուրեմն կարելի է հետևեցնել, որ Գառնիի երդիկի լույսը նույնպես ունեցել է սիմվոլիկ նշանակություն, ցանկացել են պաշտվող կուռքի վրա վերևից իջեցնել արևի ճառագայթների խուրձ:


Տաճարի ընդհանուր կառուցվածքի գեղարվեստական արտահայտչականությանը հասել են ոչ միայն նրա ճարտարապետական ու կոնստրուկտիվ ճշմարտացի ձևերի, այլև ինչպես միմյանց, այնպես էլ ընդհանուր հորինվածքի նկատմամբ առանձին մասերի ունեցած համաչափությունների ու փոխադարձ ներդաշնակության միջոցով:

Մեծ ուշադրություն է դարձվել մանրամասերի մշակման վրա, շենքի հարդարանքներին. վարդաքանդակված են խոյակները, արխիտրավները, ֆրիզը, քիվը, նախամուտքի ու սյունասրահի առաստաղի բոլոր սալերը և այլն:


Քանդակապարդման արվեստի հիմքում ընկած է միասնական հորինվածքում բազմապան մոտիվների կիրառման սկզբունքը՝ բազմապանություն միասնության մեջ:

Այսպես, եթե հունահռոմեական դասական շրջանի ճարտարապետական միանման մանրամասերն ունեն միևնույն մշակումը, Գառնիի տաճարի

Տաճարի գլխավոր ճակատը վերականգնումից հետո:



Տաճարի լայնական կտրվածքը վերականգնումից հետո:



կառուցվածքում դրանք չեն կրկնվում (օրինակ՝ Գառնիի տաճարի քսանչորս սյուների բոլոր խոյակների բարձիկներն ունեն միմյանցից տարբերվող վարդաքանդակներ), նույնիսկ ֆրիզի, ըստ էության, միայն ականթի տերևներով մշակված անընդհատ ձըգված վարդաքանդակում ճարտարապետը խույս է տվել միօրինակությունից:

Ականթի երկու նրբին ճյուղերը ելնելով ֆրիզի մակերեսի ներքևի եզրից, ալիքաձև տարածվում են աջ և ձախ և պսակվում տարբեր տեսակի ու քանակի թերթիկներ ունեցող գեղաքանդակ ծաղիկներով կամ վարդյակներով: Մի վույգ հյութեղ տերևներ նույն կորությամբ բարձրանում են վեր և, մեղմորեն խոնարհվելով ցած, ստեղծում միևնույն կենտրոնից տարբեր շառավիղներով սկզբնավորված ճյուղավորությունների հարուստ հորինվածք: Ականթի փարթամ մեկ ոստ, նույն ալիքաձև ընթացքում, սփռվում է ֆրիզի մակերեսին և, ալիքների բեկման հանգույցներում մի քանի սահուն պտույտներ կատարելով, ամբողջապես լցնում ֆրիզի դաշտը: Եվ այսպես շարունակ... նույն ականթի տերևի միջոցով, պահպանելով նույն ալիքաձև հորինվածքը ստեղծվում են մեկը մյուսին չկրկնող, մեկը մյուսից ուշագրավ վարդաքանդակի բազմապան մոտիվներ:

Զարդաքանդակներում ականթի ու դափնու տերևների հարուստ տարբերակների ու դրանց հնարամիտ դասավորությունների հետ հանդես են գալիս վանական ծաղիկներ, կաղնու տերևների, նռան և բուսական այլ վարդաքանդակների բազմապիսի համակցություններ:

Միանման մանրամասերը բազմապան ձևով մշակելու սկզբունքը կիրառված է հելլենիստական մշակույթի նաև մյուս կենտրոններում՝ Փոքր Ասիա (Պերգամ, Միլետ, Պրիենա և այլն), Սիրիա (Պալմիրա, Բաալբեկ, Անտիոք, Զեռաշա և այլն) և այլուր:


Եթե հռոմեական կառուցվածքներում վարդանկարման տեխնիկան կիրառվում է կանոնիկ եղանակներով (կարկինի օգնությամբ կամ երկրաչափական կառուցումներով), Գառնիում կատարված է ազատ, առավել սահուն պլաստիկ ձևով (խոյակների խոյողների պարույրների կառուցումը, ճարտարապետական մանրամասերի պրոֆիլների կառուցումները և այլն):

Տաճարն իր հորինվածքով և մանրամասերի ընդհանուր ձևով, ինչպես իրավացիորեն նկատել է պրոֆ. Կ. Տըրևերը, ընդհանրություններ ունի փոքրասիական նույնանման կառուցվածքների հետ (Թերմես, Սագալաս): Հատակագիծը ավելի մեծ չափով մոտենում է պերգամյան հուշարձաններին: Զարդաքանդակների մոտիվների մեջ որոշ նմանություն կա նաև սիրիական արվեստի հետ:

Տաճարի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակը եղել է ժամանակի ճարտարապետական տեսական մտքի բարձունքին կանգնած հմուտ մասնագետ, որը ոչ միայն անթերի տիրապետել է անտիկ շրջանի տաճարների կառուցողական արվեստին, այլ քաջատեղյակ է եղել վարգացման բարձր աստիճանի վրա գըտնըված ճարտարապետական հայրենի մշակույթին:

Ակնհայտ է, որ ճարտարապետին պատվիրված է եղել թագավորական ամառանոցում կառուցել «պերիպտերի» տիպի (բոլոր կողմերից սյունաշարքով շրջապատված) տաճար:

Եթե «պերիպտերին» հատուկ սյունաշարքի համար ընտրվում է հռոմեական-հոնիական օրդերը, ապա տաճարի միջուկը կապմող աղոթասըրահի ամբողջ կառուցվածքը (սրբատաշ որձաքարով պատի շարվածք, քարակերտ թաղակապ ծածկ, թաղի վերևում՝ կրաշաղախ, իսկ դրա վրա՝ որձաքարի սալիկներով պատած տանիք, երդիկ, համաչափություններ, նույնիսկ հատակագծային բացարձակ չափեր) սերտորեն կապվում է ճար-



Տաճարի երկայնական կտրվածքը վերականգնումից հետո:

տարապետական-կառուցողական արվեստի տեղական ավանդություններ ի հետ և, անտարակույս, այդ ավանդությունների արգասիք է: Ստեղծվում է հունա-հռոմեական և տեղական ճարտարապետական - կառուցողական արվեստի սինթեզի դասական մի նմուշ:

Բաղնիքը գտնվում է տաճարից մոտ 50 մետր դեպի հյուսիս-արևմուտք, կիսավեր վիճակում: Հատակագիծն ունի միևնույն ուղղությամբ իրար հաջորդող չորս սենյակներից կազմված ամբողջական հորինվածք:

Առաջին սենյակի հարավարևելյան մասից դուրս է գալիս պայտաձև հատակագծով խորշը, ներսում՝ ջրավազան: Վերջինիս նշանակությունը ըստույգ պարզված չէ: Այդ սենյակը միակն է, որ ունի երեք դուռ, որոնցից երկուսը հաղորդակցության մեջ են գտնվել դրսի, իսկ երրորդը՝ մյուս սենյակների հետ: Սենյակի հատակը (2,91×3,14 մ) ծածկված է բարձր արվեստով կատարված խճանկարով: Ակընհայտ է, որ առաջին սենյակը մյուսների համեմատությամբ ունեցել է առավել հարուստ ձևավորում: Այն շենքի ընդհանուր հորինվածքում գըրաված դիրքով և ներքին յուրահատուկ մշակմամբ պետք է որ լիներ բաղնիքի նախասրահը՝ հանդերձարանը (ապոդիտերիում):

Երկրորդ և երրորդ սենյակներն ունեն միանման չափեր (3,00×3,47, 2,96×3,57 մ) և հարավարևելյան ճակատներից դուրս եկած կիսաշրջանաձև միանման խորշեր: Անտարակույս դրանք ծառայել են միևնույն նպատակին և եղել են լողասենյակներ:

Երկրորդ սենյակը, հավանաբար, եղել է սառը ջրով լողարանը (ֆրիգիդարիում), իսկ երրորդը՝ գոլ բաժանմունքը (տեպիդարիում):

Սառը լողարանների հատակները սովորաբար չէին տաքացվում, սակայն եղել են նաև այնպիսիները, որոնց հատակները տաքացվել են Գառնիի բաղնիքի նման: Երբեմն տաքացվող հատակներ ունեցել են նույնիսկ բաղնիքների նախասրահները:

Չորրորդ սենյակը, ըստ էության,

բաղկացած է երեք մասից: Մեկը չափերով (2,90×3,05 մ) և աբսիդի բացվածքի լայնությամբ նման է նախորդ սենյակներին և անկասկած եղել է տաք ջրով լողարանը (կալդարիում)[1]:

Հյուսիսարևմտյան հատվածը, ինչպես իրավամբ նշում է պրոֆ. Բ. Առաքելյանը, ըստ երևույթին, եղել է ջրամբարի տեղը, իսկ հարավարևմտյան մասի հատակի տակ գտնվել է հնոցը, որի վրա ջուրը տաքացվել է:

Պատերը շարված են ճեղքված որձաքարով և գետաքարով, աննկյուններում օգտագործված է սրբատաշ տուֆաքարը, իբրև կապակցող նյութ օգտագործված է կրաշաղախը:

Պատերի ներսի մակերեսներին պահպանված են ծեփի երկու շերտի մնացորդներ, առաջինը՝ սպիտակավուն, իսկ նրա վրա՝ բաց վարդագույն:

Ծածկից ոչ մի հետք չի պահպանվել: Պեղումների ընթացքում գտնված ծեփի կորագիծ բեկորներից երևում է, որ այն, թերևս, եղել է թաղակապ կամ, հնարավոր է, գմբեթաձև:

Ջեռուցումն իրականացվել է այսպես կոչված հիպոկաուստի միջոցով: Լողասենյակների հատակների տակ ստեղծվել են 6—7 սմ հաստությամբ, 20—24 սմ տրամագծով կլոր աղյուսների ու շաղախի բարակ շերտի հաջորդականությամբ շարված բավմաթիվ սյունիկներ: Սյունիկների վրա դրվել են աղյուսի (6—7 սմ հաստությամբ, 60—70 սմ մակերեսով) խոշոր սալեր, ապա 2—3 սմ շաղախի շերտ, հետո նորից աղյուս (բայց ավելի փոքր չափերի) և այդ ամենը ծածկել կրի, ավազի և աղացած աղյուսի կամ կղմինդրի խառնուրդի 5,5—8 սմ հաստության շերտով:

Կրակարանից տաք օդը և ծուխը տարածվել են նախ տաք ջրով լողասենյակի հատակի տակ, ապա զգալիորեն պակասած ջերմությամբ (62 սմ լայնությամբ մի բացվածքով) անցել գոլ բաժանմունքի հատակի տակ և հետո, արդեն բոլորովին նվազած ջերմությամբ անցնելով երկու փոքրիկ (28—30 սմ լայնությամբ) անցքերով, հասել սառը ջրով լողարանի սենյակի հատակը: Այսպիսով, լողարանները տաքացել են ըստ անհրաժեշտության, և ջերմության ոչ մի կորուստ տեղի չի ունեցել:

Աղյուսի սալերը, հեշտությամբ ընդունելով տաք օդի ջերմությունը, երկար ժամանակ կարող էին պահպանել այն և մեղմորեն ու հավասարաչափ հաղորդել լողարաններին:

Ջեռուցման այս սիստեմը լայնորեն կիրառվել է հռոմեական բաղնիքներում, ինչպես և Փոքր Ասիայում, Սիրիայում, Սև ծովի հյուսիսային ափերին, Կովկասում և այլուր:

Գառնիի (հավանաբար և ոչ միայն Գառնիի) բաղնիքի ջեռուցման այդ սիստեմն օրինակ է ծառայել Միջնադարյան Հայաստանի համանման կառուցվածքների համար (Զվարթնոցի, Դվինի, Անիի միջնաբերդի, Ամբերդի բաղնիքների և այլն):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նախասրահի հատակին պատկերված խճանկարը, որը Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի մոնումենտալ գեղանկարչության, առայժմ մեզ հայտնի, միակ ամբողջական հուշարձանն է:

Նկարն ունի առասպելադիցաբանական սյուժե: Վարդագույն շրջանակի մեջ պատկերված է ծով, ուր նուրբ մշակված գունային փոխանցումները ստեղծում են ջրի ալիքների շարժման պատրանք, ասես ալիքների ծփանքին համապատասխան ծովն ստանում է բաց կանաչավուն տեսք, կամ՝ մեղմանալով, դառնում է մուգ կանաչ: Ծովի մեջ պատկերված են տարբեր աստվածություններ ու առասպելական էակներ (իխտիոկենտավրներ՝ ձիու առջևի ոտքերով և ձկան վերջավորությամբ մարդ, ներեիդներ (ծովինարներ), մեծ ու փոքր բավմապիսի ձըկ-

[1] Կա այն տեսակետը (Գ. Տիրացյան), որ առաջին սենյակը եղել է սառը ջրով լողարանը, իսկ երկրորդ և երրորդ սենյակները՝ գոլ բաժանմունքները:

ներ և այլն): Պատկերներին ուղեկցում են աստվածությունների և ծովինարների հունարեն գրված անունները (Գլավկոս, Թետիս, Ագրիոս, Էրոս, Պոթոս և այլն):

Խճանկարի կենտրոնում, հյուսածո շրջանակի մեջ, պատկերված են տղամարդու և կնոջ կիսանդրիներ: Առաջինի մոտ գրված է «օվկիանոս», իսկ երկրորդի մոտ՝ «թալասսա»՝ ծով, իսկ սրանց գլխավերևում երկտող արձանագրությամբ ասված է. «Ոչինչ չստանալով, աշխատեցինք»,— առեղծվածային մի արտահայտություն, որի էությունը դեռևս ստույգ պարզված չէ:


Խճանկարի առանձին պատկերները, մասնավորապես ձկների, կատարված են մեծ վարպետությամբ: Սահուն գրծանկարը, անատոմիական համոզիչ կառուցվածքը, գույների նրբին երանգները ցուցադրում են խճանկարային արվեստի բարձր մակարդակը: Խճանկարը պատրաստված է 15 գույնի բնական քարերի 0,5—1,0 քառ. սմ չափի խորանարդիկներից: Եզրապարդերում օգտագործված են ավելի մեծ (1—1,5 քառ. սմ չափերի) խորանարդիկներ: Նկարի նուրբ փոխանցումների իրականացումը դյուրացնելու նպատակով օգտագործված են երկրաչափական տարբեր ձևի հատիկներ (քառակուսի, ուղղանկյուն, շեղանկյուն, եռանկյուն):

Ուշագրավ է խճանկարի հիմքը. գետնի վրա շարված է կրաշաղախով միակցված գետաքարի և ճեղքված որձաքարի երեք շարք, ապա արված է 14—15 սմ հաստությամբ բետոնի շերտ և այդ ամենի վրա խճանկարի հատիկների համար լցված է 3,3 սմ հաստությամբ շաղախի շերտ՝ պատրաստված կրի, ավազի, մանրացված աղյուսի կամ կղմինդրի խառնուրդից:

Խճանկարի սյուժեն, կատարման տեխնիկան, ոճային ու գունային առանձնահատկությունները պրոֆ. Բ. Առաքելյանին հիմք են տվել այն համարելու III դարի վերջերի գործ: Այդ ամենին լիովին համապատասխանում է նաև բաղնիքի ընդհանուր կառուցվածքը[1]:

Գառնի ամրոցի ճարտարապետական խմբում և երկրի քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքներում դրսևորված անտիկ ճարտարապետությանը բնորոշ առանձնահատկությունները ցույց են տալիս նախաքրիստոնեական Հայաստանում վարգացման որոշակի աստիճանի հելլենիստական արվեստի գոյությունը: Այդ մասին են վկայում


[1] Հեթանոսական տաճարի մոտ գտնվող արտաքինից բազմանիստ, ներսից խաչաձև քառաբսիդ եկեղեցին կառուցվել է VII դարում, իսկ եկեղեցուն կից մատուռը՝ XIII դարում (պահպանվել են այդ կառուցվածքների միայն հատակագծերը):



Բաղնիքի հատակագիծը:

նաև պատմական Վաղարշապատի քրիստոնեական պաշտամունքի VII դարի տաճարի հիմքերում բացված, Գառնիի տաճարի ճարտարապետության ոճն ունեցող մոնումենտալ կառուցվածքի քանդակապարդ քարերը: Համանման ոճի ճարտարապետական մասունք գտնվել է նաև պատմական Նիգ գավառի Ափնա գյուղում:

Հայաստանն, ունենալով կառուցողական արվեստի բավմադարյան ավանդություններ, դարձավ հելլենիստական (բայց խիստ յուրօրինակ) ճարտարապետության ստեղծման օջախներից մեկը: Սակայն Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքների վերլուծությունից բխում է, որ մինչև քրիստոնեական կրոնի ընդունումը հայկական ճարտարապետությունը, շփման մեջ գտնվելով հունական, հռոմեական և հելլենիստական հարևան երկրների (Իրան, Սիրիա, Փոքր Ասիա և այլն) ճարտարապետական արվեստների հետ, ստանալով և վերամշակելով ճարտարապետական առանձին ձևեր և մանրամասներ, հիմնականում ընթացել է վարգացման ուրույն ուղիով:




Գառնի: Ամրոցի գլխավոր հատակագիծը:






Ամրոցի ընդհանուր տեսքը:



Ամրոցի մնացորդների տեսքը արևելքից:

Ամրոցի աշտարակի մնացորդները:



Ամրոցի գլխավոր մուտքի արևմտյան աշտարակի մնացորդները:






Տրդատ Ա-ի (63—88 թթ.) հունարեն արձանագրությունը:


Տաճարի ավերակները:





Հեթանոսական տաճարի բեկորներից:


Տաճարի բեկորներից:






Արգիշտի Ա-ի (III դ. մ. թ. ա.) սեպագիր արձանագրությունը:

Տաճարի քիվի բեկորներից:






Տաճարը մինչև վերականգնումը:




Տաճարի վերականգնումը:



Տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից:



Տաճարի մանրամաս:





Տաճարի նախամուտքի առաստաղը:

Արևմտյան սյունաշարքի մանրամաս:



Տաճարի արխիտրավի սոֆիտ:





Տաճարի արխիտրավի սոֆիտ:

Խոյակ:




Խոյակ:



Տաճարի սյունասրահի առաստաղի քանդակապարդ սալ:




Տաճարի սյունասրահի առաստաղի քանդակապարդ սալ:






Տաճարի մուտքի քիվի բեկոր:


Տաճարի սյունասրահի խոյակ և ներսի քիվի բեկոր:



Տաճարի ճակտոնի քիվի բեկոր:



Տաճարի ճակտոնի քիվի բեկոր:






Տաճարի անտաբլեմենտի քիվի մանրամաս:

Տաճարի ճակտոնի ակրոտերիա:






Բաղնիքի մնացորդները:

Խճանկարով հատակի մի հատված:





Խճանկարով հատակի հատվածներ:



Սահինյան Ալեքսանդր Արամի

ԳԱՌՆԻ

Саинян Александр Арамович

ГАРНИ

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван, 1985

Մասն. խմբագիր՝ Վ. Մ. Հարությունյան
Հրատ. խմբագիր՝ Է. Դ. Շահնազարյան
Նկարիչ՝ Է. Ա. Սահակյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Զ. Ներսիսյան

ИБ — 2/4
Հանձնված է շարվածքի՝ 03. 07. 84 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 11. 06. 85 թ.:
Ֆորմատ՝ 70×108 1/16: Թուղթ՝ «Կավճապատ»:
Տառատեսակ՝ «Դպրոցական»: Տպագրություն՝
բարձր: 3,15 պայմ. տպագր. մամ., 3,5 պայմ.
ներկ. թերթ, հրատ՝ 3,29 մամ.: Պատվեր՝ 1782:
ՎՖ՝ 03202: Տպաքանակ՝ 8000: Գինը՝ 50 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9,
Տերյան 91:
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

Archbishop
Vicken Aykazian